Հավելված 2

Վարկային, կոշտ գրավի և Բանկային հաշվի բացման պայմանագրի
/Ապառիկի պայմանագիր/

Ապառիկ վարկերի տրամադրման և օգտագործման կանոններն ու պայմանները

1. POS վարկավորման շրջանակում Բանկը Վարկային, կոշտ գրավի և Բանկային հաշվի բացման պայմանագրի հիման վրա /այսուհետ՝ Ապառիկի պայմանագիր/, Բանկում գործող POS-վարկավորման պայմաններով, համաձայն Բանկի և Բանկի գործընկեր հանդիսացող կազմակերպությունների միջոցով (վաճառակետերից) իրականացնում է տարաժամկետ վճարման պայմանով ապրանք(ներ)ի ձեռք բերում:
   «Վարկառու-Գրավատու», «Դուք», «Ձեր» և «Ձեզ» բառերը վերաբերում են Բանկի կողմից ապառիկ վարկ վերցրած և Բանկի կողմից բացված բանկային հաշիվներ օգտագործող ֆիզիկական անձանց:
   «ՎՏԲ-Հայաստան Բանկ», «Բանկ», «Մենք», «Մեր» և «Մեզ» բառերը վերաբերում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Պայմանները հանդիսանում են Բանկի ներքին իրավական փաստաթուղթ, ինչը Մեր հրապարակային առաջարկն (օֆերտա) է՝ կնքելու Պայմանագիր՝ Մեր կողմից հաստատված Պայմաններին և Սակագներին համաձայն:
3. Պայմանագրի նմանատիպ այլ փաստաթղթերի տիպային ձևերը սահմանվում են Մեր կողմից միակողմանիորեն և կարող են պարբերաբար փոփոխվել:
4. Ապառիկի պայմանագրով նախատեսված վարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով, Դուք Բանկում գրավադնում եք Ապառիկի պայմանագրով ձեռք բերված ապրանք(ներ)ը (Գրավի առարկա):
5. Բանկը պարտավորվում է Ձեր կողմից Ապառիկի պայմանագրով ստանձնած պարտավորությունները լրիվ կատարելուց հետո, սահմանափակումներից ազատել Գրավի առարկան:
6. Բանկը պարտավորվում է Վարկը սպասարկել Ապառիկի պայմանագրով և ներքին իրավական ակտերով նախատեսված պայմաններով և ժամկետներում: Իրականացնել Ձեր հաշվարկա-դրամարկղային համալիր սպասարկումը, այդ թվում.
   6.1 Ապահովել Վարկառու-Գրավատուին սպասարկելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած և ՀՀ օրենսդրության համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների գաղտնիությունը: Վարկառու-Գրավատուի, նրա հաշիվների և դրանցով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն Վարկառու-Գրավատուին և նրա օրինական ներկայացուցիչներին, ինչպես նաև այլ անձանց՝ Վարկառու-Գրավատուի համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաշվի գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ:
7. Մենք իրավունք ունենք՝ Բանկի Ներքին իրավական ակտերով սահմանված կարգով փաստացի ստուգել Գրավի առարկայի առկայությունը, քանակը, վիճակը և պահպանման պայմանները, իսկ Դուք պարտավոր եք առանց խոչընդոտելու աջակցել ստուգման աշխատանքներին:
8. Մենք իրավունք ունենք գրավով ապահոված Ապառիկի պայմանագրով ստանձնած պարտավորությունը Ձեր կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, իր պահանջները բավարարել Ապառիկի պայմանագրով, Համագործակցության պայմանագրով և օրենքով սահմանված կարգով:
9. Մենք իրավունք ունենք Ապառիկի պայմանագրով ստանձնած պարտականությունները Ձեր կողմից խախտելու դեպքում, պահանջել Ապառիկի պայմանագրի վաղաժամկետ դադարեցում և Գրավի իրացում, ընդ որում, սույն պայմանագրով սահմանված պայմանները գործում են մինչև սույն պայմանագրով առաջացած բոլոր պարտավորությունների մարումը:
10. Մենք իրավունք ունենք երրորդ անձանց զիջել Ապառիկի պայմանագրով նախատեսված պահանջի իրավունքներ՝ Ձեզ գրավոր տեղեկացնելով:
11. Ապառիկի պայմանագրին կից մարումների ժամանակացույցով (Հավելված 1-ով) նախատեսված ժամկետներում Ձեր կողմից պարտավորությունների չկատարման դեպքում՝ վարկի ընդհանուր պարտքի (ներառյալ տույժ, տուգանք և այլն), Բանկի կոմիսիոն վճարների գումարը անվիճելի և անակցեպտ (օրենքով սահմանված անառարկելի) կարգով գանձել Բանկում, ինչպես նաև ցանկացած այլ բանկում գանձման պահին Ձեր ցանկացած հաշվից:
12. Ապառիկի պայմանագրին կից մարումների ժամանակացույցով (Հավելված 1-ով) սահմանված՝ վարկի մայր գումարի մասնակի մարումների և տոկոսագումարների մարումների ժամանակացույցը խախտելու դեպքում Բանկն իրավունք ունի պահանջել Վարկառու-Գրավատուից վաղաժամ մարել Բանկի հանդեպ ամբողջ պարտավորությունը:
13. Վարկառու-Գրավատուն պարտավորվում է Ապառիկի պայմանագրով նախատեսված ժամկետներում մարել վարկը և տոկոսագումարները:
14. Վարկառու-Գրավատուն պարտավորվում է վարկը և տոկոսները վերադարձնել միայն ՀՀ դրամով:
15. Վարկառու-Գրավատուն պարտավորվում է ժամանակին տեղեկացնել Բանկին Ապառիկի պայմանագրից բխող պարտավորությունների կատարման անհնարինության մասին:
16. Վարկառու-Գրավատուն պարտավորվում է ապահովել Գրավի պահպանությունը, կրել Գրավի պատահական ոչնչացման, կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը՝ կորստի կամ վնասվածքի դեպքում վճարել տվյալ պահին Վարկառու-Գրավատուի վարկի մնացորդն ու հաշվարկված տոկոսները:
17. Վարկառու-Գրավատուն պարտավորվում է վճարել Բանկի սակագներով և պայմաններով նախատեսված վճարները, համաձայն Բանկում տվյալ պահին գործող սակագների և պայմանների:
18. Վարկառու-Գրավատուի կողմից վարկի գծով ժամկետանց պարտավորությունների առկայության և վճարված գումարների անբավարարության դեպքում, պարտավորությունները մարվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 358-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ:
19. Ապառիկի պայմանագրով չկարգավորվող բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
20. Ապառիկի պայմանագրի կետերից որևէ մեկի գործողության դադարեցումը չի հանգեցնում Ապառիկի պայմանագրի մյուս կետերի գործողության դադարեցմանը:
    Ապառիկի պայմանագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել Կողմերի ստորագրությամբ՝ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով:
21. Ապառիկի պայմանագրով Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Պայմանագրի կնքման պահին և Պայմանագրի գործողության ընթացքում չի փոփոխվում: